ԳՐԱՅԻՆ

մասին), ինչպես
են ավտոմեքենա:
տողների խնդրան-
հյուրն է հայտնի
Ռաֆայել Պետ-

ում են ժյուրիի ան-
տարարների և ռա-
որների համա-
ն ընկերության
հանրապետական
նախագահ Մելանյա
ևը, փոշեմետա-
տաարտադրական
գլխավոր դիրեկ-
իկական գիտու-
եկնածու Ալֆրեդ
ը, Երևանի պոլի-
ն ինստիտուտի
հանրապետության
որ գյուտարար Էռ-
արյանը, «Հայբիո-
արտադրական կոո-
վարչության ան-
աբանական գիտու-
եկնածու, դոցենտ
Հարությունյանը,
երիտասարդության
ական ստեղծա-
կենտրոնի գլխա-
տորի տեղակալ,
ն գիտությունների
ուբեն Մարտիրոս-
գրող Յուրի Կարա-

Լ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Շարունակում ենք ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքների նախագծի քննարկումը: Հաղորդաժամին քննարկվելու են հետևյալ հարցերը.

— Քրեական օրենքի հետադարձ ուժը,

— Քրեացման և ապաքրեականացման տեսական և գործնական մի քանի պրոբլեմներ,

— Հանցակցության և հանցագործությունից կամովին հրաժարվելու մասին,

— Անչափահասներին պատժից ազատելու նոր տեսակների մասին,

— Հասարակական պարապմունքը հիմունքների նախագծում և այլ հարցեր:

Հաղորդմանը մասնակցում են՝ իրավագիտության թեկնածու, դոցենտ Մ. Գրիգորյանը և պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ավագ դասախոս Ն. Մաղաքյանը:

Հաղորդումը վարում է մեր մեկնաբան, դոցենտ Տ. Բարսեղյանը:

3-ԻՆ, 18.50

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐԻ ՊՐԵՄԻԵՐԱ

«ԻՆՔՆԱՆԿԱՐ»

Մեզանից յուրաքանչյուրը յուրովի է ընկալում գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանին:

Ով մտերիմ է եղել նրան, ծանոթ է նրա մարդկային անսահման բարությանը, ով վիճել է նրա հետ՝ նրա անսասանությանը: Դժվար է ասել, թե ո՞ր պահին է ծնվում նկարչի մեջ ապագա ստեղծագործության մտահղացումը և ինչպիսին կլինի այն, բայց Ռ. Խաչատրյանի պատկերած յուրաքանչյուր առարկա ներշնչված է ինքնատիպությամբ: «Ինքնանկար» կինոնկարում գեղանկարիչը ձեզ հաղորդակից կդարձի ոչ միայն իր արվեստանոցի գեղարվեստական մթնոլորտին, այլև ձեզ հետ կքննի իր մտորումները մանկության, պատանեկության, արվեստի մասին: Նրա բարձրարժեք և կատարյալ ինքնանկարները հնարավորություն կտան ընկալել նկարչին տարբեր ժամանակահատվածներում:

Ձեր ուշադրությանը ներկայացվող ֆիլմի հեղինակն է Մոնիկա Տեր-Պողոսյանը, ռեժիսորը՝ Կարեն Մեսյանը, օպերատորը՝ Վարդան Մաթևոսյանը:

Արտադրությունը՝ հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիայի:

4-ԻՆ, 20.30

ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ

Վերջին երկու-երեք ամսում բոլորիս հուզող հարցը մեկն է. երկրաշարժ, կորուստ, ընդհատված կյանքեր, բեկբեկված ճակատագրեր և առաջին հերթին՝ մանուկներ, մանուկներ...

Ու բոլորիս վիշտը կարծես մեկեն թեթևացավ օգնության մեկնված ձեռքերի ջերմությունից: Առաջիններից մեկը մեզ օգնության հասավ մեր դարավոր եղբայրը՝ վրաց ժողովուրդը...

Այսօր Վրաստանում և եղբայրական մյուս հանրապետություններում են ապրում և ուսումը շարունակում հազարավոր հայ երեխաներ և բնական է, որ հեռուստատեսային լրագրողների գործուղման աշխարհագրությունը իր մեջ է առնում նաև Վրացական ՍՍՀ-ի Աբխազիայի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքը, Կրասնոդարի երկրամասի Սոչի և Ադլեր քաղաքները: Հաղորդումը, որ վերնագրել ենք «Եղբայրության օրենքներով», մեր ստեղծագործական խումբը նկարահանել է երկու քաղաքներում՝ Սուխումում և Ադլերում, որտեղ Հայաստանից եկած երեխաները իրենց զգում են ինչպես հարազատ օջախում: Ամենուրեք՝ ջերմ, հուսադրող խոսքեր, բացառիկ հյուրընկալ վերաբերմունք, մշտական ուշադրություն... Մի խոսքով, այն ամենը, ինչ անհրաժեշտ է երեխաների, ու ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների և ուսուցիչների հոգեկան հավասարակշռությունը վերականգնելու համար: Ինչ խոսք, տանտերերի առջև ծառացել են նաև մի շարք պրոբլեմներ, որոնց մասին նույնպես չեն մոռացել հաղորդման հեղինակները: Սակայն հաղորդումն ընդհանուր առմամբ երեխաների մի յուրովի հեռուստատեսային նամակ է՝ ուղղված Հայաստանում մնացած և վերականգնման աշխատանքներին մասնակցող իրենց ծնողներին ու հարազատներին:

27-ԻՆ, 18.50